Արձանագրություն 2

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կարիքների համար «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/42» ծածկագրով գնանշման հարցման ձևով գնումներ կատարելու գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.10.2019թ. ժամը 11:00-ին: Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Դավիթ Գրիգորյան - Գլխավոր տնօրենի տեղակալ (ԳՊ/ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝

Դավիթ Հարությունյան - Տրանսպորտի բաժնի պետ (ԳՊ/ԳԱ)

Հայկ Մինասյան - Տրանսպորտի բաժնի գլխավոր մեխանիկ (ԳՊ/ԳԱ)

Վահե Գարեգինյան - Ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (ԳՊ/ԲԱ)

Գնումները համակարգող՝

Դավիթ Գասպարյան - Գնումների և մատակարարման բաժնի գլխավոր մասնագետ

Բացակայում է հանձնաժողովի անդամ՝ գնումների և մատակարարման բաժնի շուկայագետ Գոռ Թադևոսյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտ ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և տվյալները

1.1«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/42» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

- «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 08417829, էլ. հասցե՝ m-bi-r@mail.ru
- «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն՝ ՀՎՀՀ 00873228, էլ. հասցե՝ info@flashmotors.am

1.2 Համակարգում 03.10.2019թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

2. Տվյալներ մասնակիցների հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Տվյալներ մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 2-ում (Գնային առաջարկ) 3-րդ և 4-րդ չափաբաժինների անվանումները նշված են թերի, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ armeps համակարգում գնային առաջարկը ներկայացվել է համապատասխան չափաբաժինների համար, բացի այդ մասնակցի կողմից գնային առաջարկին կից ներկայացված

բացվածքում չափաբաժինների անվանումները նշված են ճիշտ և լիարժեք, հանձնաժողովը որոշեց անվանման շեղումը համարել վրիպակ և մասնակցի հայտը գնահատել բավարար:

3.2 Մյուս մասնակցի կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 1 5 տեղանոց ավտոմեքենաներ՝ Գազ – 3102, Գազ – 31105-101	
	Նախահաշվային գինը՝ 1000000 ՀՀ դրամ	
«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ	4610425	5532510
«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ	7300000	8760000

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 3 4x4 տիպի ավտոմեքենաներ՝ Շևրոլետ Կապտիվա, Տոյոտա Պրադո, Տոյոտա LC 200, Ֆոլկսվագեն Տուարեգ	
	Նախահաշվային գինը՝ 2500000 ՀՀ դրամ	
«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ	12509770,83	15011725
«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ	20833333	25000000

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺՆԻ ՀԱՄԱՐԸ՝ 4 5-ից 17 տեղանոց մարդատար ավտոմեքենաներ՝ Շկոդա Օկտավա, Տոյոտա Քեմրի-2,5, Մերսեդես Բենց, Ֆորդ Տրանզիտ	
	Նախահաշվային գինը՝ 1500000 ՀՀ դրամ	
«Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ	11701835	14042202
«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ	19833333	23800000

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

5. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

5.1 «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ԲԷՑ-ԳՀԾՁԲ-19/42» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժինը հայտարարել չկայացած՝ մասնակից չլինելու պատճառով, 1-ին, 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվում «Ֆլեշ Մոտորս» ՍՊԸ-ն:

5.2 Գնահատող հանձնաժողովի նիստը հետաձգել և ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշման 43-րդ կետի 3-րդ մասի համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի հարկային պարտավորությունների վերաբերյալ:

5.3 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավերել սույն արձանագրության 5.2 կետում նշված փաստաթուղթը ստանալուն հաջորդող աշխատանքային օրը, բայց ոչ ուշ քան սույն թվականի հոկտեմբերի 9-ին ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Դավիթ Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝

Դավիթ Հարությունյան

Հայկ Մինասյան

Վահե Գարեգինյան

Գնումները համակարգող՝ Դավիթ Գասպարյան